Ս. Աստուածածնի, Ս. Սիոն, Բանան Քրիստոսի (Ճէնանի տունն, սովաւ կամին ասել զվանքն Ս. Փրկչի, այժմ 'ի ձեռս Հայոց)։ Ի դաշտին դերեզմանատունն. Խաչավանքն Վրաց. ('ի սմին ժամանակի Վիրք տակաւին էին յԵրուսաղէմ), Ս. Սիոն, Ս. Եղիայ վանք Վրաց, այդի և ճիթենիք. վանք Ս. Յակոբայ Վրաց առ դրան Ս. Յարութեան. Պէյթճալայ գիւղն Ս. Գէորգ, 'ի Բեթղեհէմ Այրն Ծննդեան Քրիստոսի, և յեկեղեցւոջ բանալիք հիւսիսային եւ հարաւային դրանց, երկու կտոր պարտէզ շուրջ զնովաւ, (այժմ մի մասն 'ի ձեռս Լատինաց). ճիթենիք, դերեզմանատունն, եկեղեցիք եւ վանօրայք յայլ գիւղս։ Եւ Պատրիարքութեան հետեւողք Վիրք, Հայէշք, և Սրպք, և այլք որք լեալ են վագի, Առաջնորդք եւ Վարդապետք։ Գրաւեսցէ զինչս վանքանեալ Առաջնորդաց, Եպիսկոպոսաց և Վարդապետաց, բոլորովին ազատ լիցին 'ի ջֆրէ Արաբացւոց 'ի դուռն Երուսաղէմի 'ի Յորդանան 'ի նաւամատոյցս 'ի քննութեան մաքսապետաց՝ 'ի մաքսէ և 'ի բաժէ՝ և յայլ պաշտօնէից հարկէ՝ զնա մի ոք յօտար ազգաց միջամտեալ նեղեսցէ՝ ըստ մտաց հրովարտակիս, որպէս գրեցաւ, եւ Պատրիարքն Յունաց առաջին լիցի 'ի միւս ազգաց ըստ զօրութեան դաշնագրոյն մեծին Օմարայ և հրովարտակաց առաջին Թագաւորաց։ Ես ևս ետու և հրամայեցի որ այսուհետեւ յաջորդք իմ և կամ մեծամեծ Նախարարք և առհասարակ բովանդակ պաշտօնեայք Տէրութեանս 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, եթէ ոք կամիցի 'ի սոցանէ եղծանել՝ Աստուածային բարկութեան հանդիպեսցի, զայս Կայսերական վճիռս թողեալ 'ի ձեռս նորա պատուական նշանիս հաստատացեն։

Զի թէպէտեւ պարտէր երկոցունց ազգաց վարել ըստ մտաց երկուց հրովարտակաց և զգոյշ լինել զընդդէմն գործելոյ, այլ սակս ուխտի տաճարին Ս. Յարութեան խռովութիւն ծագելով 'ի մէջ երկուց ազգաց, տուեալ են հրովարտակս հակառակ իմաստիւք երկուց կողմանց, եւ յաւաջագոյն 'ի պատճառս այրման տաճարին, խռովութիւն ծագեցաւ 'ի մէջ երկուց ազգաց, և յաղագս լուծման խնդրոյն այնորիկ՝ յաւաջագոյն Կայսերական հրո-